լրագիրները պատմում են, որ կալուածական միութիւնը օգուտ է քաղել այդ հանգամանքից։ Ցեսնելով դատարանի դժուար դրութիւնը, միութիւնը դրդել է իրլանդացիներին օգտվել կալուածական օրէնքից և իրանց վէճերը անյապաղ այդ դատարանին առաջարկել։

ՖՐԱՆՍԻԱ

Գերմանական դեսպանը Փարիզի մէջ, իշխան Հօհենլօէ, խօսելով հանրապետութեան Նախագահի հետ, ցաւակցութիւն յայտնեց Բարտելեմի Սենտ-Իլերի ապագայ հրաժարականի առիթով, որը, արտաքին գործերի մինիստրի պաշտօն վարելով, միշտ բարեկամաբար էր վերաբերվում Գերմանիային։ Իշխան Հօհենլօէի խօսքերի համեմատ, գերմանական կառավարութիւնը կասկածանքներ չունի Գամբետտայի մինիստրութեան մասին։ Դեռ ևս ոչինչ յայտնի չէ նոր մինիստրութեան կազմակերպութեան մասին, որովհետև Գամբետտա ոչ ոքի առաջարկութիւն չէ տուել։ Նա իր ժամանակը գլխաւորապէս անցնում է Վիլ-Դավրէի մէջ։ Նա նորերումս հեգնութեամբ վերաբերվեցաւ այն լուրերին, որոնք տարածված էին նրա տեսակցութեան մասին իշխան Բիսմարկի հետ։

„Times“ լրագրի Փարիզի թղթակիցը նկարագրում է Ռուէլսի իշխանի տեսութիւնը Գամբետտայի հետ։ Նրանք միմեանց հանդիպեցան նախաճաշիկի ժամանակ, որին ներկայ էին իշխանի քարտուղար Ֆրէնսիս Հօլլիս, Զարլզ Դիլկ և Ֆնդապետ Կլերկ։ Իշխանը առաջ էլ տեսնվել էր Գամբետտայի հետ, բայց այն ժամանակից նրանց յարաբերութիւնները սառել էին, որովհետև Ռուէլսի իշխանը շատ ուշադիր էր դէպի Բոնապարտի ընտանիքը։ Կամենալով այդ սառնութեանը վերջ դնել, իշխանը ցանկութիւն յայտնեց տեսնվել Գամբետտայի հետ։ Գամբետտայի բարեկամները պատմում են, որ իշխանը շատ լաւ տպաւորութիւն է գործել նրա վրա։ Խօսակցութիւնը 2 ժամից աւելի է տևել։ Երբ սկսել են խօսել Գամբետտայի տեսութեան մասին իշխան Բիսմարկի հետ, Գամբետտա ծիծաղել է և նկատել, որ նա չէ էլ մտածել Բիսմարկի հետ տեսութեան մասին և որ նա երեք անգամ զգաստի ճանապարհորդել է Գերմանիա, մինչդեռ ամենքը կարծել են, թէ նա ապրում է Վիլ-Դավրէի մէջ։ Բայց իր ճանապարհորդութիւններից ոչ մէկի ժամանակ նա չէ մտածել իշխանի հետ տեսութեան մասին, թէպէտ դիտէր, որ ինքը լաւ ընդունելութիւն կը գտնի։

Ցունիսից հաղորդում են, որ բէյը, պատասխանելով Բուստանի շնորհաւորութիւններին բայրամի առիթով, յոյս յայտնեց, որ Ֆրանսիան շուտով կը ճնշէ ապատամբութիւնը և որ Ցունիսը բարօրութեան մէջ կը լինի Ֆրանսիայի հովանաւորութեան տակ։ Մի գեներալին բէյը ասել է, որ արաբների կրօնը պատուիրում է նրանց միշտ հպատակվել իրանց կառավարիչներին։ Եթէ մի քանի ցեղեր անհնազանդ են յայտնվել, նրանց շուտով կարելի է ճնշել։

ԳԵՐՄԱՆԻԱ

Ընտրողական մաքառումն Գերմանիայի մէջ շարունակվում է կրկնաքուէարկութիւնների պատճառով։ Առաջին օրը ազատամիտները երկու տեղ յաղթեցին։ Կարլսրուէի մէջ, որ միշտ պահպանողական պատգամաւորներ էր ունենում, մի շրջանը ազատամիտ պատգամաւոր ընտրեց, իսկ միւսը առաջադէմ։ Հակասեմիտական ցոյցեր գործող պալատական քարոզիչ յայտնի Շտէօկկէր հեռացրած է իր պաշտօնից իշխան Բիսմարկի և թագաժառանգի պահանջի համեմատ։ Կոմս Վիլհելմ Բիսմարկ, որին Բերլինի հակասեմիտները առաջարկում էին իրանց կանդիդատ լինել, խստութեամբ մերժեց այդ առաջարկութիւնը։ Երևում է, որ կառավարութիւնը նոր ընտրութիւններից յետոյ ուրիշ կերպ է արամագրված։

„Post“ լրագիրը մի յօդուած է տպել, որի մէջ ի միջի այլոց ասված է. իշխան Բիսմարկ շուտով կը վերադառնայ Բերլին, որպէս զի հաշիւ ներկայացնէ կայսրին կառավարութեան ապագայ գործունէութեան մասին ընտրութիւններից յետոյ։ Լրագրին հաղորդում են պետական կանցլերի յայտնութիւնը, որ նա ձանձրացել է նախանձի, ցածութեան, բամբասանքի և տգիտութեան խաղալիք լինելուց, որոնք արձագանք գտան 45 միլիոն ժողովրդի մէջ։ Յօդուածը այն եզրակացութեան է հասնում, որ Բիսմարկի յաջորդը առաջադէմ կուսակցութեամբ անկարող կը լինի կառավարել երկիրը միապետական ոգով։

Այդ յօդուածի նպատակն է ցոյց տալ, որ իշխան Բիսմարկ կարող է հրաժարական տալ։ Կիսապաշտօնական „Post“ լրագիրը այդպիսի յայտնութիւնների համար է գործադրվում։ Իշխան Բիսմարկի հրաժարականի մասին սպառնալիքը մի կողմնակի պատասխան է ընտրութիւններին։ Գերմանացիները իշխան Բիսմարկին „կայսերական գաղափարի“ կենդանի պատկեր են համարում։ Այդ անուան հետ կապված են նրանց ամենափառաւոր յիշատակները և նրան արտաքին քաղաքական հանգստութեան գրաւական են համարում։ Գերմանական և մանաւանդ պրուսական հասարակութեան մեծամասնութիւնը չէ կարող երևակայել գերմանական կայսերութիւնը ուրիշ կերպ, որ նրա կառավարական գլխը Բիսմարկի ձեռքին չը լինի։ Գոնեա մինչև այժմ այդպէս է եղել և Բիսմարկի սպառնալիքը իր հրաժարականի մասին միշտ շտփաւորել է ընդդիմադրականների յարձակումները։ Թէպէտ այժմ հանգամանքները փոխվել են և ընտրութիւնների ժամանակ էլ յաղթող հանդիսացան այն պատգամաւորները, որոնք իրանց նշանաբան էին դրել իշխան Բիսմարկի անկումը, այնու ամենայնիւ անկարելի է, որ Բիսմարկի սպառնալիքը ազդեցութիւն չը գործի։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 26 Հոկտեմբերի

Ամեն ինչ հայոց մէջ վաճառովի է և կաշառելի. նաև միտք, նաև հոգի, նաև ձիրք և շնորք, որ բաժանում է Աստուած մարդկանց ազատ ընծայումութեան և անկախ կացութեան համար. հայի չահախնդիր բնաւորութիւնը ընդունակ է իր մանր եսականութեան համար խաղալիք շինել Աստուծու ամենայն պարգևը, ամենայն վերին տուրք։ Այս օրերս անցաւ Կ. Պոլսով դէպի Ամթենք և Հռոմ յայտնի Նկարիչ Իվան Այվազովսքի. նա մնաց այստեղ մօտ մի շաբաթ. նորան այցելեցին, ի հարկէ, ամեն դասակարգի հայեր՝ վարժապետ, վարդապետ, ուսումնական, արուեստաւոր. թղթակից, խմբագիր և այլն։ «Ինչու երկրպագութեան վազեցիք» հարցրի այցելուներից մէկին, որը յայտնի մի գիտնական է։—«Այդպիսի տաղանդաւոր հայուն հապա ինչպէս անտես առնէինք» եղաւ պատասխան։—«Բայց ինչ օգուտ հայերին այն մարդու տաղանդից, որը իր կենդանի մէջ ատում են մօտ հինգ հարիւր նկարներ է շինել, իսկ նոցանից ոչ մէկը չէ նուիրված հայկական պատմութիւնից առած նիւթին նկատեցի։—«Այվազովսքին ծովանկար է, իսկ ինչ ծովային կեանք և անցեալ կայ հայոց մէջ, որ նա իր համար նիւթ առնէր» պատասխանեց ինձ ամենայն անկեղծութեամբ հայ գիտնականը։ Ինչ որ հարկն էր ի հարկէ լսեց ինձնից. նոյնը աւելորդ չեմ համարում կրկնել մատաւորապէս և ձեր ընթերցողների առաջ, ցոյց տալու համար թէ որչափ ընդունակ է մեր հին սերունդը կեղծել, ասել, խաբել աչխարհը իրան «ազգասէր» յայտնելով, թէկուզ ինքը լինի եսամոլի, մնապանծի և պարգևապաշտի մէկը։

Նկարիչ Իվան Այվազովսքին այստեղի հայերից շատերի մօտ հայրենասիրական եռանդ է ցոյց տուել։ Ներսէս պատրիարքի մօտ նա պարծեցել է նա իր ազգասիրութեամբ, ընծայելով պատրիարքին չը գիտեմ ինչ մի մաշված պատկեր։ Բայց եթէ նկարիչ Իվան Այվազովսքին անկեղծ հայ է, թող նա ասէ՝ ինչու իր հինգ հարիւր նկարների մէջ չը կայ մի հատ նկար Հայաստանի բնութիւնից, նորա երկնքից և նորա այնչափ հարուստ անցեալից արած։ Ը. լինի թէ ինքն էլ ասած լինի շատերին այստեղ թէ՝ ծովանկար լինելով, ոչինչ չէ կարող գտնել հայոց պատմութիւնից։

Եթէ նա ծովանկար է, հապա ինչու 1866 թուին էլ Շամիլի բերդ չը մնաց, էլ Կովկասի սար և ձոր չը մնաց, էլ Կազբէկ և Տերեկ չը մնաց, որ նա չը նկարէր ու հանդէս չը հանէր Թիֆլիսի մէջ։ Այդ ժամանակ մեզ ևս յաջողվեց տեսնել, ինչպէս աշակերտ բէլգական գիմնազիայի փոքրագոյն դասատու, Իվան Այվազովսքին մօտ տասներկու նկարներ Կովկասի լեռնային տեսարաններից առած։ Դեռ մի կողմ դնենք Կովկասի նկարները, հապա քանի քանի տասնեակներով կարելի է հաշուել նորա նկարները, որոնց նիւթ եղած են Սարատովի, Ղրիմի և Սուավրօպոլի աւազոտ ամայիները։ Ինչու նոցա մէջ ևս ամիսներով աշխատելու համար ծովանկարութիւնը արգելք չեղաւ, այլ գալով միայն խեղճ Հայաստանին, այդ ծովանկարութիւնը նորա համար արգելք դուրս եկաւ...

Լաւ, դիցուք թէ նկարիչ Իվան Այվազովսքին չուզեց ցոյց տալ որ և իցէ նեղ ազգայնէնդէնցիա, նկարելով որ նէ Հայկի ու Բէլի, Արայի ու Շամիրամի տեսարանները. բայց մինթէ Հայաստանի մէջ պակաս էին նորա համար համամարդկային և ընդհանուր մարդկային պատմութեան վերաբերեալ նիւթեր։ Թողնենք մի կողմ դեռ այնպիսի ծովային նիւթեր, ինչպէս օրինակ Աշտարակի յուսահատ մաքառումը Գեղամայ ծովի վրա բազմաթիւ արաբական հրամանների հետ, երբ հայ Վիլհելմ Տելլը նետ ու աղեղը ձեռքին, մի կողմից մաքառում էր բազմաթիւ թշնամիների դէմ, միւս կողմից ջանք էր անում յաղթել թիերով իրան բռնած կատաղի ալիքներին ծովակի վրա։ Թողնենք ևս այնպիսի ծովային տեսարաններ, ինչպէս Վանայ ծովի վրա եղած պատերազմներն են. Արծրունեաց իշխանների և արաբաց ցոյց մէջ. հայոց թագաւորների և ասորոց ու պարսից աշխարհակալների մէջ։ Թողնենք այնպիսի հոյակապ ծովային հանդէսներ, ինչպէս Հեթում թագաւորի պատերազմները Կիլիկիայի ծոցում Եգիպտացոց թագաւորների դէմ, երբ մի կողմից հայոց նաւատորմերն էին տուր ու թուր գործածում, միւս կողմից Կիլիկիայի արիասիրտ հայուհիք էին պաշար ու ռազմամթերք գլորում Անարզաբայի բարձրութիւններից։ Թողնենք ևս այն մեծագիր տեսարանը, որ ներկայացնում է Արաքսի ափանչելի հովիտը Քէօփրի-քէօյի ու Բիւրակնեան լեռների մէջ. այն հովիտը, որի արանքում խոխոջում է բիբլիական Արաքսը, իր վրա ունենալով գրանիտի մի հրաշալի բարձրաբերձ կամուրջ, որի վրայով են անցել Քսենոֆոնտ և բոլոր յայտնի հռոմայեցոց, պարսից, մոնգոլական և ռուսական աշխարհակալները։ Թողնենք, ասում եմ, այդ ամենը, առնենք միայն այն Աստուածաշնչական բարձրավայրը, ուր եղել է լեգէնդական դրախտը, համամարդկային օրօրոցը. այն սիրուն բարձրավանդակը, որի վրայից դուրս են ցայտում չորս բիբլիական գետեր, ոռոգելով ամրողջ փոքր-Ասիան, բոլոր հին և նոր ազգերի այդ ծնարանը։ Եթէ Ֆրանսիացիք և անգլիացիք հազարներ մոխելով, տեսութեան և ուխտի կը գան այդ պատմական սրբատեղիք, հապա նկարիչ Իվան Այվազովսքի ինչի չէր կարող գնալ այդ տեղերը տեսնելու ու մի հատ գործով էլ իր ազգի սիրտը շահելու...

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրները հաղորդում են որ Բերլինի հրէական կօնսիստորիան դիտաւորութիւն ունի դատ սկսել Շտէօկկէր քարոզչի դէմ նրա յարձակմունքների պատճառով հրէական կրօնի դէմ։

—«Русскій Еврей» շաբաթաթերթը հաղորդում է որ Փարիզի հարուստ հրէայ Բօտշիլդ այս օրերս վախճանվեցաւ։

—Սերբիայի Միլան իշխանը հրաժարեցրեց Միքայէլ միտրոպոլիտին իր պաշտօնից։ Միտրոպոլիտը բողոքեց այդ կամայականութեան դէմ, յայտնելով որ իշխանի վարմունքը հակասահմանադրական է և որ իրան հրաժարեցնել կարելի էր միայն հոգևոր դատարանին ենթարկելուց յետոյ։

—Աւստրիայի և Ունգարիայի ազատամիտ լրագիրները մեծ համակրութեամբ են վերաբերվում դէպի գերմանական վերջին ընտրութիւնները։

—Գերմանական պարլամենտի համար կատարվող կրկնաքուէարկութիւնների ժամանակ արդէն ընտրվեցան մի քանի տեղերում պրոգրէսիստներ, ազատամտներ, սոցիալիստներ և մի տեղ մի կղերական։ Պահպանողականներից դեռ ևս ոչ ոք ոչ մի տեղ չընտրվեցաւ։

—«Temps» լրագիրն հեռագրում են Բերլինից որ Բունզէն պատգամաւորի դէմ դատ է սկսված, որովհետև ընտրողական ճառի ժամանակ նա վիրաւորեց իշխան Բիսմարկին, ասելով որ Բիսմարկ կառավարում էր Գերմանիան ռանակոխ անելով սահմանադրութիւնը, ինչպէս մի դիկտատոր։

—Սոցիալիստների պարագլուխները՝ Լիբկնէխտ, Բէբէլ և Հազենկլէվեր արդէն ընտրվեցան պարլամենտի անդամներ։

—Իտալիայի թագաւորի ճանապարհորդութիւնը Աւստրիայի մէջ և նրա տեսակցութիւնը աւստրիական կայսրի հետ մեծ ներգործութիւնը ունեցաւ Իտալիայում։ Հակառակ կուսակցութիւնները Իտալիայում սկսում են հաշտվել կառավարչական քաղաքականութեան հետ։

—Գերմանական «Post» լրագիրը մեղադրում է գերմանական ազգին ապերախտութեան մէջ դէպի Բիսմարկ իշխանը, Գերմանիայի այդ բարերարը։ Լրագիրը կարծում է որ եթէ իշխանը կանցլերի պաշտօնից հրաժարական կը տայ, նրա յաջորդը ստիպված կը լինի առաջնորդվել կամ կղերականների, կամ պրոգրէսիստների մեծամասնութեամբ Բայխստագի մէջ։

—Լրագիրները հաղորդում են որ պահպանողական կուսակցութիւնը խորհուրդ է տալիս Բիսմարկին լուծել պարլամենտը և նոր ընտրութիւնների հրաւիրել գերմանացիներին։ Բայց երկիւղ կայ որ եթէ այդ դիտաւորութիւնը կիրագործվի, գերմանական ազգը կընտրի Բիսմարկին թշնամի կուսակցութիւններին պատկանող պատգամաւորներին աւելի էլ մեծ թիւով, քան թէ այժմ է ընտրել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԴ, 5 Նոյեմբերի։ „Русскій Инвалидъ“ լրագիրը հերքում է պաշտօնապէս այն լուրը որ իբր թէ զինուորական ծառայութեան ժամանակամիջոցը երկարացրած է։ „Порядокъ“ հաղորդում է որ 4-ին Նոյեմբերի էկսպէդիցիան վճռեցին որ զէմստվոյի և քաղաքային ձայնաւորները, նոյնպէս և պաշտօնեաները, որոնք կապ ունեն խմիչքների առուտուրի վերահսկողութեան հետ, զրկված պէտք է լինեն գինեատներ պահելու իրաւունքից։ պահեստ պահողները իրաւունք ունեն միայն խորհրդակցական ձայն ունենալ։ Նոյեմբերի 3-ին Մոսկվայի համալսարանին հրամայված է դադարեցնել իր սկսած դասը Կատկովի դէմ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵԲՐՈՒՆԻ